

# ԵՐԲ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ Է





ԵՄՊՈՒԿԱՆ ԵՒՐՈՊԱՆԻԱԿԱՆ ՄԱՍՈՍՏԱՆԱԿԱՆ  
EUROPEAN UNION FOR ARMENIA

Գրքույկը մշակվել է Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ ԵՄ ֆինանսավորմամբ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում իրականացվող «Բնակչության պաշտպանության ուժեղացումը Հայաստանում» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Գրքույկի պարունակությունը պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

# Հայաստանի Հանրապետության բնակիչներին

Այս գրքույկն ուղղվում է ՀՀ բոլոր բնակիչներին: Գրքույկի նպատակն է օգնել ավելի լավ պատրաստվել ցանկացած արտակարգ իրադրության՝ սկսած լուրջ տեխնածին վթարներից, բնական երկրաբանական երևույթներից, ծայրահեղ եղանակային պայմաններից մինչև հարձակումները ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

Շատ մարդիկ կարող են տազնապի զգացում ունենալ, երբ բախվում են աշխարհի անորոշություններին և/կամ ոչ ստանդարտ իրավիճակներին: Հայաստանը իր աշխարհաքաղաքական պայմաններով մշտապես ենթակա է զանազան մարտահրավերների, ուստի առկա են վտանգներ, որոնք կարող են սպառնալ մեր անվտանգությանը և կյանքի բնականոն ընթացքին:

## « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԺԵՔ Է, ՈՐԸ ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՍՄԵՆ ՕՐ ՊԱՇՏՊԱՆԵՔ ԵՎ ԱՄՐԱՊՆԴԵՔ: »

Կառավարությունը, համայնքային խորհուրդներն ու մարզերը, քաղաքապետարանները, ընկերություններն ու կազմակերպությունները պատասխանատու են հասարակության բնականոն գործունեության ապահովման համար: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ոք, ով ապրում է Հայաստանում, կհսում է մեր երկրի անվտանգության և ապահովության հավաքական պատասխանատվությունը: Երբ մեզ ինչ-որ բան է սպառնում, միմյանց օգնելու մեր պատրաստակամությունը կարևորագույն արժեքներից մեկն է դառնում:

Ձեր պատրաստակամությամբ դուք նպաստում եք մեր երկրի ծանր փորձությունները հաղթահարելու կարողության բարելավմանը և դիմակայունության բարձրացմանը:

# Ինչ կանեիք, երթ ձեր առօրյան գլխիվայր շրջվեր:

Արտակարգ իրավիճակները կարող են հանգեցնել այնպիսի պայմանների, երբ հասարակությունն ընդունված նորմերին համապատասխան չի գործում: Կլիմայի փոփոխությունը կարող է դրդապատճառ լինել, որ ջրհեղեղներն ու անտառային հրդեհներն ավելի հաճախակի դառնան: Աշխարհի ցանկացած վայրում տեղի ունեցող միջադեպերը կարող են որոշ սննդամթերքի տեսակների պակաս առաջացնել: Անհրաժեշտ SS համակարգերի խափանումները կարող են բացասաբար ազդել էլեկտրամատակարարումների վրա: Կարճ ժամանակահատվածում մեր առօրյան կարող է խնդիրներով լեցուն դառնալ: Այս ամենին անխոս գումարվում են ռազմական ընդհարումների հավանականությունը, սեյսմիկ ակտիվության հնարավոր ավելացումն ու ուժգնացումը, տեխնոլոգիական հնարավոր խաթարումները և այլն: Ենթադրյալ պայմաններում՝

**Դադարում է էլեկտրասնուցման, ջեռուցման մատակարարման բնականոն գործընթացը:**

**Դժվարանում է սնունդ պատրաստելն ու պահելը:**

**Սննդամթերքը և այլ ապրանքները կարող են սպառվել խանութներում:**

**Կենցաղային կարիքները հոգալու համար չկա ջուր:**

**Անհնար է մեքենան լիցքավորելը:**

**Վճարային քարտերն ու բանկոմատները չեն աշխատում:**

**Բջջային կապի ցանցերն ու համացանցը չեն աշխատում:**

**Հասարակական և տրանսպորտային այլ միջոցները կանգ են առել:**

**Դժվարանում է դեղորայք և բժշկական սարքավորումներ ձեռք բերելը:**

Խորհե՛ք այն մասին, թե ինչպես դուք և ձեր շրջապատի մարդիկ կկարողանայիք հաղթահարել մի այնպիսի իրավիճակ, երբ հասարակական ծառայությունները չեն գործում այնպես, ինչպես սովորաբար գործում էին:

# Ձեր պատրաստվածությունն արտակարգ իրավիճակներին

Ձեր քաղաքապետարանը (համայնքապետարանը) պատասխանատու է, նույնիսկ արտակարգ իրավիճակների ի հայտ գալու դեպքում, հասարակական ծառայությունների գործունեության շարունակականության ապահովման համար:

Որպես առանձին անհատ յուրաքանչյուր ոք պատասխանատվություն է կրում իր հերթին: Ճիշտ նախապատրաստվելը կարող է յուրաքանչյուրիս հնարավորություն ընձեռել հաղթահարել խրթին իրավիճակը՝ անկախ դրա առաջացման պատճառից:

Հասարակության մեջ արտակարգ իրավիճակների ի հայտ գալու դեպքում օգնությունն առաջին հերթին պետք է տրամադրվի առավել կարիքավորներին: Մարդկանց մեծ մասը պետք է պատրաստ լինի որոշ ժամանակ ինքնուրույն կողմնորոշվել ստեղծված իրավիճակում: Որքան լավ պատրաստված լինեք, այնքան ավելի մեծ հնարավորություն կունենաք նաև օգնելու ուրիշներին, ովքեր չունեն ստեղծված իրադրությունից դուրս գալու համանման ունակություններ:

Ամենակարևորն այն է, որ ջուր, սնունդ և ջեռուցում ունենաք և կարողանաք տեղեկատվություն ստանալ իշխանություններից ու լրատվամիջոցներից: Բացի այդ, պետք է նաև կարողանաք կապ հաստատել հարազատների հետ: 6-րդ, 7-րդ և 8րդ էջերում նշված է՝ սննդամթերքի և այն պարագաների ցանկը, որոնք նպատակահարմար է տանն ունենալը:

Խորհրդից այն վտանգների մասին, որոնք կարող են ազդեցություն թողնել ձեր և ձեր տեղանքի վրա: Արդյո՞ք ապրում եք երկրաշարժի, սողանքների, փլուզումների և ջրհեղեղների ենթակա տարածքում: Ձեր տարածքում կա՞ որևէ վտանգավոր արդյունաբերական օբյեկտ կամ այլ ձեռնարկություն, որոնց գոյության մասին լավ կլինի իմանալ:



# Զգուշացե՛ք ապատեղեկատվությունից

Ոչ բարեկամ պետություններն ու կազմակերպություններն մշտապես օգտագործում են ապակողմնորոշիչ տեղեկատվություն՝ փորձելով ազդել մեր արժեքների և մեր գործողությունների վրա: Նպատակը կարող է լինել մեր տոկոսնությունն ու ինքներս մեզ պաշտպանելու պատրաստակամությունը թուլացնելու ձգտումը:

Ապատեղեկատվությունից և թշնամական քարոզչությունից լավագույն պաշտպանությունը ցանկացած տեղեկատվության աղբյուրին քննադատորեն վերաբերելն է:

- **Արդյո՞ք այն փաստացի տեղեկություն է, թե՞ պարզապես՝ կարծիք:**
- **Ո՞րն է այդ տեղեկատվության նպատակը:**
- **Ո՞վ է այն հրապարակել:**
- **Արդյո՞ք աղբյուրը վստահելի է:**
- **Արդյո՞ք այդ տեղեկատվությունը հասանելի է որևէ այլ տեղ:**
- **Արդյո՞ք այդ տեղեկատվությունը նոր է, թե՞ հին, և ինչու՞ է այն հրապարակվել հենց այս պահին:**



- **Փնտրե՛ք տեղեկություններ - քարոզչության և կեղծ տեղեկատվության դեմ հակազդելու լավագույն միջոցը քո առջև դրված խնդիրը պատշաճ կատարելն է:**
- **Մի հավատացե՛ք ասեկոսներին - օգտագործե՛ք մեկից ավելի հավաստի աղբյուրներ, որպեսզի համոզվե՛ք տեղեկատվության արժանահավատության մեջ:**
- **Ասեկոսներ մի՛ տարածե՛ք - եթե տեղեկությունը վստահելի չի թվում, մի՛ փոխանցե՛ք այն:**

# Ահաբեկչական հարձակման դեպքում

Ահաբեկչական հարձակումները կարող են ուղղված լինել առանձին մարդկանց կամ խմբերի դեմ, հանրության կամ հասարակության կենսական նշանակություն ունեցող գործառույթների դեմ, ինչպիսիք են էլեկտրաէներգիայի մատակարարումը կամ տրանսպորտային համակարգը: Թեև գոյություն ունեն ահաբեկչություն իրականացնելու բազմաթիվ եղանակներ, սակայն որոշ խորհուրդներ կարող են կիրառելի լինել շատ իրավիճակներում:

- **Տեղափոխվե՛ք անվտանգ վայր և խուսափե՛ք մարդկանց մեծ խմբերից:**
- **Չանգահարե՛ք 911, կամ 102 հեռախոսահամարով և տեղեկացրե՛ք, եթե ինչ-որ կարևոր կամ վտանգավոր բան էք տեսել:**
- **Չգուշացրե՛ք նրանց, ովքեր վտանգի մեջ են և օգնե՛ք նրանց, ովքեր օգնության կարիք ունեն:**
- **Միացրե՛ք ձեր բջջային հեռախոսի անձայն ուեժիմը և մի՛ զանգեք այն մարդուն, ով կարող է վտանգի գոտում գտնվել: Հեռախոսի զանգի ձայնը կարող է բացահայտել թաքնված մարդու գտնվելու վայրը:**
- **Ձեր բջջայինով որևէ մեկին մի՛ զանգեք, եթե ծայրահեղ անհրաժեշտություն չկա: Եթե ցանցը ծանրաբեռնված լինի, հնարավոր է դժվար լինի կենսական նշանակության զանգեր կատարելը:**
- **Կատարե՛ք ոստիկանության, փրկարարական ծառայության և իշխանությունների պահանջները:**
- **Մի՛ տարածեք չհաստատված տեղեկատվությունն առցանց կամ այլ եղանակով:**



# Տնային պայմաններում պատրաստվածուխյան վերաբերյալ խորհուրդներ

Մարդկանց պայմաններն ու կարիքները տարբեր են, կախված նրանից՝ ապրում էք գյուղական, թե խիտ բնակեցված քաղաքում, ձեր սեփական առանձնատանը թե բազմաբնակարան շենքում: Այստեղ կարելի է գտնել մի քանի ընդհանուր խորհուրդներ տնային պայմաններում պատրաստվածուխյան վերաբերյալ: Օգտագործե՛ք այն խորհուրդները, որոնք նպատակահարմար են ձեզ և ձեր մտերիմների համար: Լավ գաղափար է որոշ բաներով կիսվելն ու միմյանցից վերցնելը:

## Սնունդ

Կարևոր է տանն ունենալ լրացուցիչ սնունդ, որն ապահովում է բավարար կալորիաներ: Օգտագործե՛ք չփչացող մթերք, որը կարելի է արագ պատրաստել, քիչ ջուր է պահանջում կամ կարելի է ուտել առանց պատրաստման:

- **կարտոֆիլ, կաղամբ, գազար**
- **պիտանելիության երկար ժամկետ ունեցող հացամթերք, օրինակ՝ պինդ հաց, կրեկեր, չորահաց**
- **պանիր, փափուկ պանիր և այլն**
- **կաթի փոշի, յուղ**
- **արագ եփվող մակարոնեղեն, բրինձ, ձավարեղեն, արագ պատրաստվող կարտոֆիլի խյուս**
- **պահածոների զանազան երկարատև պահվող տեսակներ**
- **մրգային խյուս, ջեմ, մարմելադ**
- **բալով, հապալասով, մասուրով կամ այլ մրգերով պատրաստված, հյութեր կամ այլ ըմպելիքներ (կոմպոտներ), որոնք կարելի է պահել սենյակային ջերմաստիճանում**
- **սուրճ, թեյ, շոկոլադ:**



## Ջուր

Մաքուր խմելու ջուրը կենսական նշանակություն ունի: Յուրաքանչյուր չափահաս մարդու համար անհրաժեշտ է օրական առնվազն երեք լիտր խմելու ջուր: Եթե վստահ չեք ջրի որակի հարցում, ապա ճիշտ կլինի եռացնել այն:

Եթե զուգարանը չի աշխատում, կարող եք ամուր պոլիէթիլենային տոպրակներ վերցնել և տեղադրել զուգարանակոնքի մեջ: Ձեռքերի լավ հիգիենան կարևոր է վարակից խուսափելու համար:

- ◆ **Շէր, կափարիչով դուլեր**
- ◆ **պլաստիկ շէր ջուրը սառեցնելու համար (ջուրը մի՛ լցրեք մինչև եզրագիծը, հակառակ դեպքում շիշը կճաքի)**
- ◆ **հանքային ջուր**
- ◆ **դատարկ մեծ ջրի տարաներ՝ (կանխտերմեր) նախընտրելի է**
- ◆ **ջրի ծորակի առկայություն: Կարող եք նաև մի քանի մաքուր տարա ունենալ, որոնք որպես պահուստ լցված կլինեն ջրով: Դրանք պետք է պահվեն զով, մութ տեղում:**

## Ջեռուցում

Եթե էլեկտրաէներգիան անջատվի տարվա ցուրտ եղանակին, ձեր տունն արագ կցրտի: Հավաքվեք մեկ սենյակում, ծածկոցներ կախեք պատուհաններից, ծածկեք հատակը գորգերով և սեղանի տակ տնակ կառուցեք, որպեսզի ջերմությունը պահպանեք: Մտածեք հրդեհի վտանգի մասին: Քնելուց առաջ մարեք բոլոր մոմերը և ջեռուցման այլընտրանքային միջոցները: Պարբերաբար օդափոխեք սենյակը՝ թթվածնի անհրաժեշտ քանակն ապահովելու համար:

- ▲ **բրդյա հագուստ**
- ▲ **տարվա բոլոր եղանակների համար նախատեսված արտաքին հագուստ**
- ▲ **գլխարկներ, ձեռնոցներ, շարձեր**
- ▲ **ծածկոցներ**
- ▲ **քնագորգեր (դրվում է քնապարկի տակ ջերմամեկուսացման համար)**
- ▲ **քնապարկեր**
- ▲ **մոմեր, փոքր մոմ**
- ▲ **լուցկի կամ կրակայրիչ**
- ▲ **ջեռուցման այլընտրանքային միջոցներ, օրինակ՝ գազի ջեռուցիչներ, պարաֆինային տաքացուցիչներ:**

## Այլ

- **սպիրտային վառարան և վառելիք**
- **գրպանի լապտեր, գլխի լապտեր, մարտկոցներ**

Ցանկալի է տանն ունենալ 1 կամ մի քանի կրակմարիչներ:

## Կապ


Լուրջ միջադեպի դեպքում դուք պետք է կարողանաք կարևոր տեղեկատվություն ստանալ իշխանություններից, առաջին հերթին հեռուստատեսությունից, ռադիոկայանից և այլ ինֆորմացիայի աղբյուրներից: Դուք նաև պետք է կարողանաք հետևել, թե ինչպես են լրատվամիջոցները հայտնում իրադարձությունների մասին, կապի մեջ մնաք հարազատների և ընկերների հետ և կարողանաք դիմել 911 և/կամ շտապ օգնության ծառայություններին:

- ▶ **մարտկոցներով, արևային էներգիայով կամ ձեռքի գեներատորով աշխատող ռադիո**
- ▶ **մեքենայի ռադիո**
- ▶ **թղթի վրա կարևոր հեռախոսահամարների ցանկ**
- ▶ **լրացուցիչ մարտկոցներ/լիցքավորիչ՝ սարքերի և բջջային հեռախոսների համար**
- ▶ **բջջային հեռախոսի լիցքավորման սարք, որն աշխատում է մեքենայում**
- ▶ **կանխիկ գումար**
- ▶ **դեղատուփ և հավելյալ դեղամիջոցներ**
- ▶ **թաց անձեռոցիկներ**
- ▶ **ձեռքերի ախտահանիչ միջոց**
- ▶ **անձեռոցիկներ և տակդիրներ**
- ▶ **փաստաթղթեր՝ թղթային տարբերակով, ինչպիսիք են ապահովագրական պոլիսները, բանկային տվյալները, գրանցման վկայականները**
- ▶ **վառելիքով բաք:**

# Եթե Հայաստանը տարբեր տեսակի հարձակումների ենթարկվի

Մենք պետք է կարողանանք դիմակայել մեր երկրի դեմ ուղղված տարբեր տեսակի հարձակումներին: Այսօր էլ հարձակումներ են տեղի ունենում մեր ՏՏ համակարգերի վրա և փորձեր են արվում ազդեցություն թողնել մեզ վրա՝ օգտագործելով կեղծ տեղեկություններ: Մեզ վրա կարող են նաև ազդեցություն թողնել մեր տարածաշրջանի հակամարտությունները: Հնարավոր հարձակումները ընդգրկում են՝

- ◆ **Կիբերհարձակումներ, որոնք ոչնչացնում են կարևոր ՏՏ համակարգերը:**
- ◆ **Ենթակառուցվածքների դիվերսիա (օրինակ՝ ճանապարհներ, կամուրջներ, օդանավակայաններ, երկաթուղիներ, էլեկտրական մալուխներ և ատոմային էլեկտրակայաններ):**
- ◆ **Ահաբեկչական հարձակումներ, որոնք ազդեցություն են թողնում մեծ թվով մարդկանց կամ կարևոր կազմակերպությունների վրա:**
- ◆ **Հայաստանի որոշում կայացնողների կամ բնակիչների վրա ազդեցություն թողնելու փորձեր:**
- ◆ **Խաթարված տրանսպորտային կապեր, որոնք հանգեցնում են սննդամթերքի և այլ ապրանքների պակասի:**
- ◆ **Ռազմական հարձակումներ, օրինակ՝ օդային հարվածներ, հրթիռային հարձակումներ կամ պատերազմական այլ գործողություններ:**



# Արտակարգ դրության վիճակ

Կառավարությունը կարող է որոշել երկրում Արտակարգ դրության ռեժիմ մտցնել՝ Հայաստանի ինքնապաշտպանության հնարավորությունները մեծացնելու համար: Արտակարգ դրության դեպքում կիրառվում են խաղաղ ժամանակվա օրենքները, սակայն կարող են կիրառվել նաև այլ օրենքներ: Օրինակ, պետությունը կարող է մասնավոր սեփականություն պահանջել, որը հատուկ նշանակություն ունի Հայաստանի համընդհանուր պաշտպանության համար:

Արտակարգ դրության վիճակում ողջ հասարակությունը պետք է մեկտեղի իր հավաքական ուժը՝ ապահովելու համար կենսական նշանակության ծառայությունների շարունակականությունը: Արտակարգ դրության դեպքում դուք կարող եք հավաքագրվել՝ տարբեր ձևերով օգնություն տրամադրելու նպատակով:

Արտակարգ դրության ռեժիմի սահմանման մասին տեղեկատվությունը կհեռարձակվի ռադիոյով, հեռուստատեսությամբ:

## Ազդարարման համակարգեր

### Հրապարակային կարևոր հայտարարություն

Ազդարարման և տեղեկատվական համակարգը (կարևոր հրապարակային հայտարարությունը) օգտագործվում է արտակարգ իրավիճակների դեպքում, ինչպիսիք են վնասակար նյութերի արտանետումները, պայթյունի վտանգով հրդեհները, անտառային հրդեհները և այլ բնական աղետները:

### Արտաքին ազդարարում

Հազվագյուտ դեպքերում օգտագործվում է արտաքին ազդարարման համակարգը: Արտաքին ազդարարման համակարգերը տեղակայված են փոքր բնակավայրերի և քաղաքների մեծ մասում և Հայաստանի ատոմակայանի շրջակայքում:

Եթե լսում եք «ներս մտե՛ք, փակե՛ք պատուհանները, դռներն ու օդափոխությունը և լսե՛ք տեղեկատվությունը» ազդարարումը, ապա վերջինս նախատեսված է հրապարակային տեղեկատվություն տրամադրելու համար:

# Արտակարգ իրավիճակների տագնապ և օդային հարձակման տագնապ

**Արտակարգ իրավիճակների տագնապը** միջոց է կառավարության համար՝ հայտարարելու, որ պատերազմի անմիջական վտանգ կա, կամ երկիրը պատերազմի մեջ է:

Պատրաստվեք հեռանալ տնից ձեզ հետ ամենակարևորը վերցնելով՝ տաք հագուստ, ուտելու և խմելու ինչ-որ բան և անձր հաստատող փաստաթղթեր: Եթե ձեզ պատերազմական գործողությունների ժամանակ պարտավորությունների ստանձնման հրահանգ է տրվել, ապա դուք պետք է անմիջապես գնաք այն վայրը, որտեղ ձեզ հրահանգել են գնալ:

**Օդային հարձակման տագնապը** ենթադրում է, որ դուք պետք է անմիջապես պատսպարան (թաքստոց) գտնեք, օրինակ՝ օդային հարձակման համար նախատեսված պատսպարանը կամ այն շենքի նկուղը, որտեղ դուք գտնվում եք:

Բնակչությանը նախազգուշացնելու նոր եղանակներ կարող են կիրառվել:



# Թաքստոցներ և պաշտպանական այլ տարածքներ

Թաքստոցները կարող են ապահովել բնակչության պաշտպանությունը պատերազմական գործողությունների ժամանակ: Ձեզ չեն կցում որևէ հատուկ թաքստոցի, դուք ընտրում եք այն թաքստոցը, որը ձեզ ամենամոտն է:

Պարզեք թե որտեղ են գտնվում ձեր բնակության վայրին և ցերեկային ժամերին ձեր գտնվելու վայրին ամենամոտ թաքստոցները: Օդային հարձակման տազնապի դեպքում անմիջապես զնացե՛ք թաքստոց կամ, ծայրահեղ դեպքում, մտե՛ք մեկ այլ պաշտպանական տարածք, ինչպիսիք են նկուղը, թունելը կամ մետրոյի կայարանը:

«Օդային տազնապ» ազդանշանի դեպքում էլեկտրաշահանների միջոցով տրվում է ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան 2-3 րոպե տևողությամբ:

Բջջային հեռախոսներին ուղարկվում է կարճ հաղորդագրություն՝ «Օդային տազնապ» պատասպարվել պաշտպանական կառույցներում:

## Ինքնակրթվե՛ք

Սովորե՛ք առաջին օգնություն ցուցաբերել: Ձեր գիտելիքները կարող են կյանքեր փրկել: Եթե դժբախտ պատահարից կամ այլ լուրջ միջադեպից հետո առաջինը դուք եք հայտնվել դեպքի վայրում, ապա զանգահարե՛ք 911 և/կամ շտապ օգնության 103 հեռախոսահամարով: Նույնիսկ եթե ձեր վճարովի SIM քարտի հաշվի գումարը սպառված լինի, կամ ձեր բջջային հեռախոսը SIM քարտ չունենա, ամեն դեպքում դուք կկարողանաք զանգահարել 911 հեռախոսահամարով:

## Կարևոր նշումներ

Գրե՛ք կարևոր հեռախոսահամարները, հասցեները, մոտակա պատասպարանների կամ այլ թաքստոցների գտնվելու վայրերը:

Այս գրքուկի նպատակն է օգնել մեզ ավելի լավ պատրաստված լինել ամեն ինչին՝ խոշոր վթարներին, ծայրահեղ եղանակային պայմաններին, ՏՏ հարձակումներին, և ամզամ ուղղման հակամարտություններին: Լավ մտահղացում կլինե՛ր գրքուկի բովանդակության մասին խոսել ձեր շրջապատի մարդկանց հետ:



